Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին
30 հոկտեմբերի 2024թվականի N 01-Ա

Վարդան Մատինյան ԱՁ-ին
հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր
Զորավար Անդրանիկի 57
էլ.հասցե՝ matinyanvardan5@gmail.com

Հարգելի Վարդան Մատինյան.

ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ձեր՝ /Վարդան Մատինյան ԱՁ-ի/ (այսուհետ՝ Կապալառու) միջև 2022 թվականի հունիսի 22-ին կնքված ԼՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-22/08 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 1-ին փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով, Լեռնապատ բնակավայրի 10-րդ փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով, Զորագյուղ բնակավայրի ճանապարհի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով աշխատանքները:

ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի և Ձեր միջև 2023 թվականի հունվարի 9-ին կնքվել է Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 1-ին փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով, Լեռնապատ բնակավայրի 10-րդ փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով, Զորագյուղ բնակավայրի ճանապարհի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով ԼՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-22/08 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի վերաբերյալ թիվ 01 Համաձայնագիրը, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև՝ 01.11.2024թ.:

Ըստ ԼՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-22/08 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի 3.1.4 կետի Պատվիրատուն իրավունք ունի՝ Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե ա) **Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհատ անհնար:**

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.

ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման 32-րդ կետի 17) ենթակետի դ. պարբերության համաձայն, եթե կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, որ միակողմանի, ամբողջությամբ լուծում է Ձեր և Փամբակի համայնքապետարանի միջև 2022 թվականի հունիսի 22-ին կնքված ԼՄՓՀ-ԳՀԱՇՁԲ-22/08 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. Կոստանդյան**

Կատ. Գլխավոր մասնագետ 2.3- 2' Ա. Խաչատրյան
+37494391986